ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐՇԱԼԱՆՔԻ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 126

20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱՒԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տարեկան՝ 40 դրկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դրկ.։—Արտասահման՝ տար. Ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են։

ՀԱՍՑԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK
Péra, 5 Rue Baïram 5
Constantinople

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի Շաբաթ օրերը։ 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն ղրկուած ո և է յօդուած։ 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին։ 4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր։ 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն։ 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին։ 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին ղրկել։

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5։ Տպարանս ըստ ամենայնի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար։ Կը տպուին ամէն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարտ-սարէններ, մահագդներ, եւն., եւն.։ Գիները անմրցելի կերպով աժան են։ Գեղեցկագիտական ճաշակի և տպագրական մաքրութեան կողմանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան։

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի ❁ 20 Դեկտեմբեր 1913 ❁ Թիւ 126

«Սրբազան Բանուեայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւանանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն ուրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի տէլ Վալի, առ Ան. Տ. Պողոս Պետրոս ԺԳ. Թորգեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 թուահամարաւ:

ԴԷՊՔԵՐ ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Բ.

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

Ամէն բան ազատ մակդիրով պատկերու մարմաջը՝ օրուան մեծ չարժումն եղաւ և է տակաւին՝ որքան ալ անցուդարձերու անստուգութիւնը թմրեցուցած ըլլայ զայն առժամաբար։ — Ազատ միտք, ազատ տպագրութիւն, ազատ դպրոց, ազատ խիղճ, ազատ սէր, ազատ կրօնք։ — Ո՞ւր կը տանի այս։ — Մարդն իր ազատութեան մակոյկին վրայ նստած կը յառաջանայ աշխարհիս ծովու վրայէն, ուր կրճերու հովերն փոթորիկ կը սպառնան չրջելու մակոյկն, ծովամոյն կորսընցնելու զայն և անոր ապաւինողներն, եթէ առջեւն չառնուի։ Ասոր համար հարկաւոր է ղեկ, հարկաւոր է հակակշռող կեդրոնաձիգ ծանրութիւն, մին խելքը՝ միւսն կամքը կառավարելու համար ամուր բռնելով ամէն կրից փոթորիկի դէմ։—Ո՞րն է ղեկը, ո՞րն է հակակշիռը. ղեկն է ճշմարտութիւնն որ մարդուս խելքը կ'ուղղէ և խելք կ'ըսուի գրաբարի մէջ նաւակին այն մասը ուր ղեկն է ղետեղուած. հակակշիռն է բարութիւն որ սրտին կը յատկացուի և սիրտը մարդուս կեդրոնն է՝ նշանաբան կամքին։ Ճշմարտութեամբ եւ բարութեամբ ազատութեան նաւակը ուղիղ կը քալէ և հաւասարակշռութիւնը կը պահէ. կը քալէ ապահովաբար ու կը հասնի զարգացումի նաւահանգիստը։— Եւ այսպէս դրէք ազատ մակդիրին քով ճշմարիտ կամ բարի վերագիրներն ալ, կամ երկուքը մէկտեղ, և դուք ապահոված էք ամէն բան, ազատութիւնն ալ, ազատութեան սահմաններ,

ը՝ ալ։ Ազաս միտֆ կամ գաղափար կ'ըսուի՞. դրէ՛ք քովը ճշմարիտ մակդիրն. և ո՛հ ճշմարիտ գաղափարի բնական իրաւունքն է ազատութիւնը. ազաս տպագրութիւն կ'ուզուի՞, դրէ՛ք քովը բարի մակդիրն և ճշմարտութեան ու բարութեան ամենամեծ գործիչն կ'ըլլայ տպագրութիւնը. ազաս դպրոց կ'ուզէ՞ք, դրոշմեցէ՛ք զայն ճշմարիտ և բարի անուամբ եւ ահա ճշմարտութեամբ ու բարութեամբ ուսուցման և դաստիարակութեան շուքին մէջ ապահոված կ'ըլլաք մարդկային զարգացումի խանձարուրը։ Ազաս խիղճ կը պահանջէ՞ք, ըրէ՛ք որ նա բարի ալ ըլլայ և դուք արդարութեան և իրաւունքի գատը ապահոված կ'ըլլաք։ Ազաս սէ՞ր ալ կ'ուզէք վայելել՝ սրբացուցէք զայն բարութեամբ և դուք ընկերութեան հիմն՝ ընտանիքը գորովանքի, հաւատարմութեան ու վստահութեան նուիրատուն մը կ'ընէք։ Վերջապէս կրօնքն ալ կ'ուզէք որ ազատ ըլլայ. թո՛ղ ճշմարիտ ըլլայ և դուք յանուն ազատութեան կրօնքի առաքեալներ կ'ըլլաք։— Ահա մէկ հատիկ միջոցը մարդն խաղալիկ չընելու յախուռն ազատութեան մը անխելք ու անկշիռ մակոյկին՝ կրից և չար ձգտումներու փոթորկին դիմաց։ Մարդուն ամէն շարժումներն երբ մարդկային են՝ մտքէ ու կամքէ կախում ունին, և երբ միտֆն ճշմարտութեան ղեկով և կամքը բարութեան կշիռով կառավարուած են, այն շարժումներն մարդկային են և միանդամայն ուղիղ ու արդար, որ ըսել է մարդավայել։ —Ուսումնասիրե՛նք այս անգամ ճշմարտութեան ղեկը, պահելով ուրիշ անգամու բարութեան կշիռը, և տեսնենք թէ ինչպէս ճշմարտութեամբ ազատութիւնը ապահով և վստահելի կ'ըլլայ, իսկ ազատութեամբ ճշմարտութիւնը զարգացումի միակ գործիչն է։

Ե՞րբ է որ ճշմարտութիւնն ազատութեան կաշկանդումն կրնայ նկատուիլ. երբ չէ հասկցուած հիմնովին թէ ինչ է ճշմարտութիւն և թէ նա ազատութեան հարկաւոր, անպայման սահմաններէն մէկն է։ — Ճշմարտութիւնն՝ երբ իրօք ճշմարտութիւն է՝ հարկ մի է բնական՝ և ո՛չ կաշկանդում, սահման մի է եւ ո՛չ բանտ։ Ցիշեցէ՛ք անցեալ անգամուան ըսածս. ազատութիւնն գեա՛ մի է, որ գեղատի ունենալու է երկու կողմէն՝ չյորդելու համար։. այդ ափերն են ճշմարտութիւն մէկ կողմէն, բարութիւն միւս կողմէն. երբ ասոնց մէջէն և ուղղութեամբը քալէ գետն՝ չի կրնար վատնգաւոր ըլլալ այլ բարեբար։ — Ի՞նչ է ուրեմն ճշմարտութիւնը, հարցուած մը, որուն մարդկութիւնը ինքիրմէն չէ կրցած լիովին պատասխանել՝ մինչեւ որ չեկաւ Այն, որ կրցաւ ըսել թէ ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն եւ կեանք, որուն մարդ չպիտի կարենայ պատասխանել Անկից հեռանալով։ — Նախապաշարեալի խօսք չէ ըսածս. մարդկային մտքի պատմութիւնը մէջտեղ կեցած է. քննեցէ՛ք զանիկայ եւ տեսէ՛ք թէ խեղճ մարդկային միտքը այս հարցման առջեւ ո՛ր ասոիճանի իրարանցումի մէջ գտնուեր է։ Անհնարին է բոլոր պարբերութիւններն մի առ մի քննել, մէկ երկու կիսաւոր բաժանում կ'ամփոփէ ամբողջը։ — Մէկ դպրոցը զգայարանաց մէջ փակեց ճշմարտութիւնը (Դեմոկրիտէս). ուրիշ մը գաղափարաց մէջ (Պղատոն), ուրիշ մը երկուքին մէջ (Արիստոտէլ)։ — Առաջինը միտքը կապակց, զգայարանք մը դարձուց զայն, անոր սլացքը քեռնաւորեց և միտքն ինկաւ վար գետնաքարշ, բնազդումէ տարբերութիւն չունէր։ Ինչ եղաւ հետեւանքը. անել փապուղիներու, մութ անցքերու մէջ ինկածի պէս պռոաց յուսահատ միտքը. «Զգայարանաց համբաներն նեղ են, անցք չկայ ճշմարտութեան հասնելու համար» (Եմբիտոկլէս)։ Ուրիշ մը, «խորունկ ջրհորի մը մէջ է թաղուած, ըսաւ, ճշմարտութիւնը, հետեւաբար մարդուս դիւրամատչելի չէ. ուստի՝ միաբերան աղաղակեց այս դպրոցը՝ չկայ մարդ մը որ գիտուն կամ իմաստուն կարենայ ըսուիլ։— Գաղափարաց մէջ փակելով ուզեց սլացք մը տալ ճշմարտութեան՝ երկրորդ դպրոցը. բայց այնքան օդային ըրաւ որ նա նօսրցաւ, թուլցաւ, եթերացաւ և ցրուեցաւ ու չի բռնուեցաւ և միտքն ապուշ ապուշ սկսաւ նայիլ Սկեպտիկութեան մէջ և ըսել թէ ճշմարտութիւն չկայ. այն մտֆի ֆուն

է, մուք է չորս կողմերնիս (Անաքսաքորաս)։ — Երրորդ Դպրոցը կրնար ազատել միտքը իր նաւաբեկութենէն՝ բայց ան ալ մարդին չատ տալով երբեմն և երբեմն առարկային, մէկ ծայրայեղութենէ միւս ծայրայեղութեան մղեց, աջ ու ձախ զարկաւ միտքը՝ զայն խորտակելու վտանգով և ըստ սոնցմէ մէկը (Թէոփրաստէս)։ Ճշմարտութիւնը այս երկրի վրայ բուսնելիք տունկ չէ. և Սոկրատ. ինչ որ մեզմէ վեր է, մեզի համար չէ։ Ի՞նչ պատճառաւ մեզ համար չէ. Քրիստոսի գալստենէն առաջ ուրիշ ազգ մ'ալ կար, ուրիշներու նման մարդիկներէ կազմուած, և սա վստահաբար կ'ըսէր թէ ճշմարտութիւնն ունի. Հրէից ազգն էր այն. նա մրցած էր Ասուրոյ և անոր առաջնորդութեամբ կը յառաջանար դէպ 'ի Քրիստոս։ Ահա այս ազգին իմաստունն պատճառը կու տայ թէ ինչո՞ւ ճշմարտութիւնն միւս ազգաց անմատչելի էր. «Միամիտ ուրոյ փնտռեցէ՛ք զանիկայ, վասնզի անոնք կրնան գտնել որ զայն չեն փորձեր եւ կը յայտնուի անոնց որ չեն թերահաւատիր, վասնզի մոլար խորհուրդներն Աստուծմէ կը բաժնեն»։

Ի՞նչ ըրաւ վերջին դարերու փիլիսոփայութիւնը՝ երբ ուզեց ինքնավար, ինքնիշխան ըլլալ։ — Նորոգեց նոյն և կատարելապէս նոյն ելեւէջերն, մտքի միևնոյն պարբերութիւններն։ — Նիւթապաշտն ցամքեցուց միտքը և զարգացնելով հանդերձ նիւթական արհեստներն և դրական գիտութիւններն՝ փակեց միտքը անձուկ, նեղ ծակի մը մէջ, ուր խղդուելու աստիճանի հասաւ եւ աղաղակեց Jouffroyի հետ. «Փիլիսոփայութիւնը, որ ըսել է մարդկային բանականութիւնը շատ նեղ փակուած է, ուր հեղձամուղձ ըլլալու վտանգի մէջ է»։ — Ասոր օգնութեան հասնիլ ուզեց բանապաշտը. բայց անոր ինքնապաշտութիւնը ցնորք մը նկատեց զնշմարտութիւնը, մտքի բանաստեղծութիւն ըրաւ զփիլիսոփայութիւնը և ըստ Վոլդէռի օրուան մօտաց, որ շարունակ կը փոխուի։ Ի՞նչ եղաւ ասոր հետեւանքն. ահաւասիկ ինչ կ'ըսէ իրենցմէ մէկը. «Հին փիլիսոփայութեան պատմութեան մէջ ուրիշ լաւագոյն բանի մը չենք հանդիպիր, բայց եթէ խեղաթիւր կարծեաց, խելացնորմանց, հակասութեանց, սխալներու, ծաղրելի գաղափարներու Լաբիւրինթոսի մը, որ պտուղ է յողդողդուն եւ մոլեգին դատողութեան եւ ասոր համար շատ ծանր յոգնութենէն ետ միայն կարելի է մի քանի հազուադեպ ճշմարտութիւն գտնել հոն» (Thommase Reid)։

Դժբախտաբար չի մնաց այս՝ տեսականին մէջ և ահաւասիկ ճշմարտութիւնը վտարուեցաւ աշխարհէ. անիկայ՝ կարծիք է, ըսուեցաւ... բացարձակ ճշմարտութիւն չկայ աշխարհի վրայ, ուրեմն ազատ ենք ուզածնիս ըսելու, ուզածնիս մտածելու, ուզածնիս գրելու։ — Մոնտաանդ սուտ ըսելն հաւասարապէս կարեւոր է ըստ Լուտերի՝ ինչպէս ճշմարիտը (հմմ. Denifle Լուտեր և լուտերականութիւն էջ. 138 Իտալ. թարգ.) եւ հրաման տուաւ տալու Վոլդէռ, ուզածն քալեցնելու համար։ — Աստուած մարդուս բան, խօսք տուած է ըսելիքը, միտքը ծածկելու համար (Talleyrand) — և առաջ երթալով՝ տալու արհեստը իմաստութիւն կոչուեցաւ. «Միտքն կեղծել իմաստութեան բովանդակութիւնն է, այն խիտ մացառն է որ մեծ մարդկանց դիտաւորութիւններն կը ծածկէ, տեսակ մը մայրի ամօթաղածութիւն է որ մեզ սօղել կուտայ մտածմանց մերկութիւնը (Bacon)։ Խե՜ղճ մարդկութիւն այսչափ յոգնելու էր գտնելու համար թէ ինքն տալու համար տեղծուած է, տոութեամբ գործելու է, տոութեամբ ապրելու. վե՛րջը. յուսահատ մեռնելու համար։

(Շարունակելի)

ՁԱՎԱԼԸ ԷՀԱԼԻ!

Թահրիր օտարնա կիտէր վէ մասասր պաշնա կէշէր։ Գալէմինի ալարաղ, էօնիւնտէքի քեաղրտա չէօյլէ պիր պաղար վէ քէնտի քէնտինէ.

— Օ տէյիլ ամմա, պու կիւն նէ՞ իյճատ իսէպիլիրիմ։ Խաթրընա պիր չէյ կէթիրէմէ-տիյինատէն, գալէմինի եիւքսէքտէ թութմըշ գալըր։

— Ֆագաթ հէր կիւն իշուն տէ քէնտի-լերէ պիր բուհման գայթակղութիւնը իյճատ իթմէք տէ գօլայ տէյիլ տիր...։ Լաքին նէ՞ եարարսըն, ատէթ պաթթալ օլմալը տէյիլ... գարիլերիմ օ քիւչիւք ուայուրմա հիքեայէ-լերտէն չօղ մահզուզ օլույօրլար, հէր վագրթ օ կիպի հիքեայէլեր իսթէյօրլար... ծնսրզ իշթահլարը աչըլմալօր...։ Մութլագա ծնլարտան պիր զէվզ տույուեօրլար...։

Տահա քեաղրա պէմ պէյազ տուրույօրար։

— Պու նէ՞ սանաաթ տըր. տօղրուսը, հէր կիւն իշուն հագիկաթա պէնզէր օլան պիր եալան ուայուրմագ բէք տէ գօլայ տէյիլ տիր...։ Ֆագաթ նէ՞ եարարսըն, մայիշէ-թիմի թէմին իթմէք լազըմ տըր, չօլուգ չօ-ճուղըմ վար տըր... իշթէ պու սէպէպէ մէպնի տէ պու պէրպատ կաղէթանդն բուհ-պան ալէյհինատէ օլան զըսմընդն թահրիրինի տէրիւհտէ իթմէյէ մէճպուր օլմուշըմ...։

Եաք եալընդզ օլտուղը հալտէ պաշլար կիւլմէյէ։

— Եօգ, իշթէ պու թուհաֆ տըր...! մէզհէպ հագգընտա հիչ պիր քէլիմէ պիլէ պիլմէտիյիմ հալտէ... Մեզհեպ մուհարրիրի օլտուղրմ պէնիմ տէ խօշրմա կիտիյօր...։ Եանըլմազսամ իլք հաղորդութիւն ալմըշըմ կիպի կէլիյօր խաթրըմա, Ֆագաթ օթուզ սէ-նէտէն պէրի հիչ պիր քիլիսայա այագ պատ-մամըշըմ... գաթիէն քարոզ իշիթմէմիշիմ... հիչ պիր քահանայ իլէ տէ կէօրիւշմէմիշիմ...։ Պունընլա պէրապէր, հէր կիւն տէ եինէ հէմ մէզհէպ հագգընտա վէ հէմ տէ բարաղլարա տայիր մէպալէյէր, իտապէրլէր իճատ իտէ-պիլիյօրըմ...։ Սանաաթ օլտուղտան սօնրա պէօյլէ օլմալը...։ Էլ վէրիր արթըզ, էբէյի-ճէ էյլէնտիմ... տէ՛ պագալըմ, հէյլէ պու կիւն իշուն պիր գայթակղութիւն չարէտինէ պագալըմ...։

Մուհարրիր գալէմինի էլինտէն պրագը, պաշընը իւքի էլէրի արասընա ալարակ,

— Ախլագա դարշը պիր հիքեայէ... պու տէֆա տա եէնի պիր չէյ օլմալը... հէր տէ-ֆասընտա տա բարաղըն պիրի ճիւպպէյի սը-յըրմըշ... վէ... իլէ գաչր վէրմիշ... խա-պերլերի էհէմմիյէթսիզ գալը։ Պու կիւն տէ պիր բարա մէսէլէսի սթալըմ մէյանա...։ Եվվէթ, պու ֆիքրիմ էյի տիր։

Դալէմի թէքրար էլինէ տալը։

— Մէսէլէնին մահալը վուգուի նէ՞րէսի օլաճագ տըր...։ Թապիի Իթալիա տահա միւնասիպ տիր, քի՞մ կիտիպ տէ թահզրզ ի-տէճէք...։

Պունա գարար վէրտիքտէն սօնրա, պաշ-լար հազմայա,

— «Բօմա մուհապիրի մախսուսրմրզ-տան».

— Ծիլվագը, Բօմատա մուխապիրիմ հօգ տըր, Ֆագաթ նէ՞ զարարը վար...։ Պու ահ-մադ կաղէթա գարիլերի օլտուգճա, հէր տիւրլիւ եալանը եութարրմագ միւմքին տիր։ Հէյլէ չու պիզիմ մուհապիր նէ՞ տէյօր, պա-գալըմ...։

«Իթալիա թեմլեհինին պիրինտեն... իշար օլունցրդրնա կեօրէ»։

— Պունտա ինանմայաճագ պիր չէյ հօգ տըր, չիւնքի Իթալիասա բէք չօղ թեմլեր մէվճուտ տըր...։ Ֆագաթ քիմ Իթալիայա գասար կիտուպ տէ մէսէլէյի թահգիգ իթ-մէք քիւլֆէթինատ պուլընաճագ տըր։

Եինէ տէվամ իտէր,

«Դաթօլիքլերին վինցանլարընը ալթիսթ իտեպիլենեք պիր մահիյեթի հայիզ օլան... պիր բարա մեսելեսի վագը օլմուշ տըր...։

— Պուլարմ, տէյիլ մի...։ Զօղլարը վար տըր քի պիր էսէրի զասաֆ նէթիճէսի օլմագ իւզրէ մէզհէպ աճընընրլար...։ Օնլարընդ պու հիսսիյաթլարընը թախրիպ իթմէյի...։

«Օ աւելորդապաշ թեմտեհ ղայեթ մեպզուլանեհ բօբլանընլան իանեյի Եպիսկոպոս՝ ֆենցի բահսի մեմուրընա թեսլիմ իտեր իմիշ...։

— Իշթէ չու «աւելորդապաշ» թապիրի բէք միւնասիպ օլտու...։ Սատէճէ թահսիլ մէմուրը տէմէք պու գասար մուվաֆքզ օլ-մայաճագտը...։ Օ տէյիլ եա, պու «թահսիլ» թապիրի բարաղ թապիրի մի տիր աճէպա...։ Զանն իթմէմ, պու թապիր հիւքիւմաթա ա-

յիտ պիր թապիր տիր . . . ։ ՊուՆՐն եէրինէ «սանտրգքեար» քիլիմէսինի գօմագ տահա միւնասիպ օլաճագ ։

Թասհիհ իթթիքաէն . . . սօնրա տէվամ էյ-լէր ,

«Պու տեՃա մեգքիւր սանտրգքեար 150 պին Ֆրանգ աՃրարագ Ֆիրար իրմիՃ տիր:

— Անէպա եիւզ էլլի պին ֆրանք քեաֆի ոի տիր . . . ։ Էվվէթ , պու գատարը էլ վէ-բիր . . . ֆագլա գոյանաճագ օլսամ պէլքի ինանմազլար . . ։ Պագ , պագ . ամմա տա չաշգը-նըմ պէն ։ Մէսէլէ իթալիատա վագը օլսուզը հալսէ . պէն գայգմըշտա «ֆրանք» տէյօրըմ ։ Լիրա տէմէք լազըմ կէլիր ։

Թէքբար թասհիհ իտէր վէ իյճատընը ի-լէրի կէօթիւրիւր .

«ԶապրբաՃա թանգրգաթ իճրա իտիրմէտէ տիր, Ֆագաթ եպիսկոպոս, ռուհանի ալեմտէ բէք ումուսի օլան պու մեսելեյի գաբաթմայա չօգ չապալայօր. . .։

— Եօգսա չօգ գրզը՞լ մը օլտու . . . ։ Տօղ-բուսը , պէն եէհուտի վէ բարլամէնթօ ալէ-մինտէ բարա տօլանարմագ մէսելէսի քէսիր էլ վուգու օլտուզընը իշիթմիշիմ . բաբազ-լար իշուն պէօյլէ պիր չէյ տույտուզըմ եօք տըր , ամմա , նէ եարարսըն , ագլըմա պէօյլէ էտի ։ Շիմտի պէն , պու միսիլլու իխթիլաս-լար բաբազլար ինտինտէ չօգ վագը օլուր օլ-տուզընը . . . մամաֆիյի մէսէլէտէ զիմէտխէլ պուլընանլար թարաֆընտան պատարրլտը-զընը հէր քէսէ ինանարմայա չալըշմալըյըմ ։ Շիմտի պու հավատիատէն չըգարրլաճագ նէ. թիճէյի , ալընաճագ տէրսի իպրէթի իլավէ իթմէլի . . . ։

«Արթրգ հիալինին՝ պու իանեյէր եիւ-զիւնտեն թեեմինի մայիտեթ իտեն վէ սատեսիլ խալգը ալտատմագլա կէչինեն բաբազլարա գարշը ույանմասը իգթիզա իտեր»

— Պիր ազ ֆագլաճա օլսու ամմա , նէ էհէմմիյէթի վար . . . ։ Հագիգաթը հալսէ բէք չօգ բաբազլար կիպի քէօր պուճագլարընտա բաթաթէս եէմէքլէ սէֆիլ սուբէթսէ եաշա-մայը պէն հիչ արզու իթմէմ . . . ։ Պիլիրիմ քի պագիլէրինին , հալի վէ կէչիմի եօլընտա տըր , ֆագաթ պանա նէ՞ , եանի հէրսի ատ աճլըգտան պայըլսալար գուլաղը՞մ մը տույա-ճագ ։

Մուհարրիր քեաղըտընը թէքրար օգուր վէ մէնունիյէթինտէն թէպէսիւմ իթմէյէ պաշ-լար ։ Պիր . էլէքթրիք տիւյմէսինէ տօգունը , մաթպաատան պիր չըրագ եօգարը կէլիր ։

— Էֆէնտիմ .

— Շու քեաղըտը մաթպաա մէմուրընա վէրիրսին . «Մեզհէպի հավատիսլեր» գրամը իչուն տըր ։

— Բէք էյի , էֆէնտիմ ։

Մուհարրիր էլէրինի օվալայարագ քէնտի քէնտինէ ,

— Եարընն սապահ սէքիզ եիւզ պին քիչի չու իճատքէրտէմ օլան եալանա ինանաճագ տըրլար ։ Վա՛յ ահմագլար . . . ։

(Մապատի վար)

ԵՐ. ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վ. Ա. Ս Ն

յետին ժամանակիս ազգիս մեծոյ հակառակութեան որ ընդ միմեանս վասն Դաբողիկութեան, եւ յաղագս որոյ յայտնեցոյ ուսմամբ երկրորդ յուսաւորիչ կոչեցեալոյ յոմանց, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն հանախտին նորին:

Արդ այսմ այսպէս լինելոյ , զկնի զատ-կին տարեալ զվէքիլն զայն Իզմիրցին յէտ-բէնէ և զայլ ոմն առաքեալ ասա վէքիլ ։ Եւ ապա զհրամանն և զթէրման հանեալ ի թա-գաւորէն , այսինքն զթէրմանս ինանեւտան , որք ամենեքեան էին բուն կռուոյ և պատ-ճառ սուգանայ , և տուեալ զնոսա ի ձեռս Ղափուճի պաշեոյ ումեմն և եկեալ ընդ նմա զԻզմիրցին զայն սեւ-ազլուխ զվէքիլն իւր որ յաջողակն էր ի չարիս , և զոմն աշխարհա-կան Պալըքէսէրցի Հայրապետ անուն , որ էր հայր գիւաց , զնոսա առաքեաց ի Ս . Երու-սաղէմ . և անդ թէ զի՞նչ գործելոց էին՝ ոչ գիտեմ . սակայն զայս կարծեմ և հաւատամ իսկ զի սուտն Աստուծոյ յայտմ ամի եթէ գնացեալք լինէին սուտգապէս և աներկայ

տաճկաց տային։ Բայց յուսացելոցս առհաւատչեայ առցուք զանցեալ ամն, թէ զո՛ր-քան խռովութիւնս և զաղմուկս արարին և ո՛րքան քակէ հանեցին զնա, որպէս լուեալ էք յուխտաւորաց Երուսաղէմ։ Քանզի առաքեալ անդ զվէքիլն իւր զԱմասիացի Յովհաննէս վարդապետն և զՊալըքէսէրցի Հայրապետն և գնացեալ նոքա ի կուռոյ երբէք ոչ դադարէին, այլ միշտ զչարիս որոնելով և սահմանելով ի յայտ բերէին և զսուրբ տունն ի յետին թշուառութիւն հասուցին։ Զտանուտէր տանն Բէէղվերուղ կոչեալ, և զընտանիս նորա տարադէպ ցրուեալ։ Զառաջնորդ գահին սրբոյ քանիցս անգամ ի բանտ արգելեալ և ի նմանէ անիրաւութեամբ զդրամս պահանջեալ. սովով և ծարաւով զնա լկեալ և նեղեալ և զմիաբանս սուրբ ուխտին տարագիր հալածեալ. յորոց ոմանք յԻստամպոլ դիմեալ և զդէս սուրբ տանն ողբալով պատմեալ. և այնք որ զոճիրս զայս գործեալ և ապա զձեռս իւրեանց ի տունն ձգեալ։ Զիրաւունս ուխտաւորացն խլեալ և ըստ ախորժակացն իւրեանց ծախեալ և մրսխեալ։ Զպարտս տանն ի վերայ պարտուց բարդեալ, և զդուռն սուրբ վանացն աղխեալ և փակեալ. զազգս Հայոց ի լեզու ձգեալ՝ յայլոց ազգաց զմեզ ծաղր արարեալ։ Նախասոնօք եղեալք նախատեալ, ի զուր դատեալ յապրանաց եղեալ, եթէ չարիք նոցունց էին յերկարեալ, կարծեմ յազգէս մերմէ ոչ ոք էր ապրեալ։

Արդ մինչ զԻզմիրցին և Պալըքէսէրցին ընդ Ղափուճի պաշտով եկին Իստամպոլ զի երթիցեն անտի ի սուրբ Երուսաղէմ և մնացեալ անդ վասն խռովութեան և ամբոխման զօրաց թագաւորին և քաղաքացւոցն որ ի Կոստանդինուպոլիս, բայց յառաջ քան զայս մինչ Իստամպոլ և Էյտրէնէ մինչ ի խաղաղութեան կայր, նոյն Աւետիք Փաթրիկն զկնի Վարդավառի տօնին յաւուր հինգշաբաթի, Յուլիս ամսոյ ութ, եկեալ յէյտրէնու հանդերձ բարձրաձիւռ իշխանութեամբ ի փառս վեհին իւրոյ, այսինքն Մուֆթուն, և ի պարծանս իւրոցն հաստատեալ եւ թէվապեայ,[1] և գայր մեծաշուք փառաւորութեամբ ի Կ. Պոլիս, յաղագս հաւաքման ուխտաւորացն Երուսաղէմի։ Եւ մինչ հասանէր նոյն ճոխաբար իշխանութեամբն ի Զօրլու կոչեցեալ գիւղաքաղաքն, որ և լուեալ անդ զխռովութիւնս և զամբոխմունքն Ստամպօլու, որոյ սկիզբն եղեւ յուլիսի վեց։ Բայց ճահ է մեզ և ըմբռն աստանօր ի բազմացն զիրար ինչ ճառել զմեծաշուք փառաւորութիւնս նորա։ Թէպէտ զառաջին նուագսն պատմեցաք նախնակի, սակայն զայս երրորդ գալուստն նորա յոյժ սքանչացուցին և պատմեցին մեզ որք ականատեսք եղեալ և ճանապարհորդակիցք ընդ նմա արք հաւատարիմք. քանզի ասեն թէ առաւել եւս քան զերեք թուղի փաշայսն այլազգեաց եղեալ և այնպիսի փառաւորութեամբ յէտրէնու ելեալ, այսինքն ինքն նստեալ յոսկեզօծ կառս որ զարդարեալ էր՝ սէրասէր բարձօք եւ մեծագին մուշտակք ոսկեցեալ ի վերայ բարձիցն եւ ընդ նմա նստեալ ոմն տղայ մանուկ գեղեցիկ, եւ հովչօք միշտ հողմահարէր զնա։ Եւ զկառն ծածկեալ ծիածան եւ ծիրանաձին չուխայուք. եւ ընդ առաջ կառացն ընթանային երկու եէտէկք երիվարք ականակուռ սարօք զարդարեցեալք. եւ ի վերայ նոցա վահանք զրահք եւ ճերիտք, ըստ օրինի մեծամեծ վուզարայից, եւ յաջմէ եւ յահեկէ չափուշք մամճիք եւ հասաղճիք, եւ այլ հեծելազօր տաճիկք փուռ զինուք[1] վանեցելովք, Սախայ պաշօք, եւ սեւապլխովք եւ այլովք այլազան կահիւք եւ զրահիւք եւ իշոզլանօք որպէս եւ վայելէր իսկ նմա, ասէին տեսողքն։ Արդ այսու փառաւորութեամբ եւ հանդիսիւ ժամանեալ ի Զօրլու և անդ զտեղի կալաւ որպէս ի վերոյ ասացաք, որ եւ անդ հասին ի Թէքիրտաղու արք ոմանք՝ բազում ընծայիւք եւ ընդ նոսա Ամանօղլի Յովսէփ վարդապետն Կեսարացի, եւ մնացեալ անդ ի Զօրլու զաւուրս երկու՝ եւ անտի եկեալ սակաւ առ սակաւ յառաջ ընթացեալ մինչեւ ժամանեալք ի Փաքչէքմէճէ, որպէս պատմեաց մեզ նոյն Ամանօղլի վար-

[1] Թէվապի, հպատակ։

[1] Բիւր սիլահ։

դպրեան, թէ մինչ դայաք ի ճանապարհին մինչ ի Զէքմէճէ ասէ, բազում անգամ ասացի նմա թէ վարդապետ ե՛կ զի դարձցուք ի Թէքիրտաղի եւ կամ թէ յԱնատոլի անցցուք։ Եւ նա պատասխանէր թէ վարդապետիս հարցանեմ. եւ մտեալ յառանձնանայր ի խուց իմն, եւ յամէր անդ իբրեւ զժամ մի կամ աւելի, եւ ապա ելեալ ասէր թէ վարդապետս յԻստամպօլ եցոյց մեզ գնալ, զայս իրս քանիցս անգամ արար ի Զօրլուէ մինչ ցՈւսկուտար եւ միշտ ասէր թէ վարդապետս յԻստամպօլ ցուցանէ երթալ եւ ոչ երկնչիլ։ Եւ մինչ ի Զէքմէճէ էաք նստեալ, տեսեալ զմեզ ոմն մեծագոյն Տաճիկ ասաց թէ ո՞ւր կամիք գնալ Փաթրիկ։ Ասացաք յԻստամպօլ։ Ասաց Տաճիկն մի՛թէ խելագարեա՞լ իցէք զի Իստամպօլ կամիք գնալ, այլ գնացէք յԱնատոլի եւ ոչ յԻստամպօլ. զի անդ խռովութիւն բազում է. գուցէ ձեզ վնաս ինչ դիպիցի։

Եւ ապա մոտաք, ասէ, նաւակ մի ես եւ նա եւ երիս սպասաւոր աղայ ընդ մեզ, եւ միւս այլ նաւակ մի լցաք զքառր ինչ եւ երկու տիկ գինի եւ գիմեցաք յՈւսկուտար իբրեւ զանխուլ ի մարդկանէ։ Բայց զայլ զկահս եւ զկարասիս եւ զսպասաւորսն բարձեալ երիվարօք հանդերձ՝ իջուցեալ ի ծովեզրն յէյուպ Սուլթանին որ ի կողմն Պալատու, զի անդ դիցեն ի նաւս եւ հանցեն յՈւսկուտար։ Սակայն որք ընդ Աւետիք Փաթրկին էին արք ոմանք սեւագլուխք եւ քահանայք, մտին Իստամպօլ ի նոյնում օրն՝ Յուլիսի չորեքտասան, չորեքշաբաթի օր, եւ լու եղեալ յԻստամպօլ վասն իրայն եղելոց, վասն որոյ ոմանք յԻստամպոլցւոցն աճապարեալ հասին փութանակի յՈւսկուտար ի նոյն չորեքշաբաթի երեկոյին եւ գտին զնա յօթեալ. եւ շրջապատեցին զնա բռնաւորօք եւ պահէին զգուշութեամբ զգիշերն ողջոյն։ Եւ ոմանք ի բարեկամացն մաղթելով ասէին ցնա. վարդապետ եթէ կամիս՝ զոյ հնար, ել եւ գնա՝ ատի, զի մեք հոգասցուք վասն փախուցանելոյ զքեզ, եւ զքեզ անհոգս արասցուք։ Եւ նա ասէ, չկրեմ զի՛նչ խօսիք արկեօք. ես երիս մանչուկ ունիմ ի վերաս, ընդէ՞ր թողից զիշխանութիւնքս եւ փախեայց։ Եւ ապա մերթ առ մերթ յառաջնանայր ասէ եւ արկանէր զվիճակս ըէմին [1], եւ արտաքս ելեալ ասէր իւրայնոցն. «Ծաներուք զուք զի յաջողակ է յառաջակայ գործս մեր, մի՛ երկնչիք։» Եւ ի լուսանալ առաւօտուն գնացեալ ոմանք զգէրման առեալ յամիրայէն եւ պայրաղ, որ յայնմ ժամանակի զօրքն եւ քաղաքացիքն ամբոխ արարեալ նստէին յէք-Մէյտան եւ գիմեալք յՈւսկուտար եւ կալեալ զնա եւ բերին առ ամիրան, որ յԻստամպօլ բազում Եէնիչէրիք կային անդ որ եւ նոքա եւս ամբաստանեցին զնմանէ ասելով թէ. Այս կեավուրս յեվնկեան զմեր եօլտաչս բազումս եսպան. եւ. ի պեխերան զաղբս քամեաց, ապա մահն անցեալ է, քանի արեան ուէր է»։ Եւ արկին զնա անդ ի բանտ Մունդուր աղայի թօմբուխն եւ մնաց անդ զաւուրս ինչ. յետ որոյ եւ զնա ամիրան յԵնիչէրեաց աղայն ի պահ եւ անդ մնացեալ աւուրս երկուս եւ ապա անտի տարեալ զնա ի գիշերի յուլիսի քսան եւ երկու յարեւմտեան կողմն քաղաքին Ստամպօլու՝ որ կոչի եօթնեակ կլայ [2] անտես ի մարդկանէ, ուր զՍուլթան Օսման եւ զՍուլթան Իպրահիմն խեղդամահ արարին։ Արդ Աւետիք զալըմ Փաթրիկս այս, որ երբեմն զոմանս քրիստոնեայս ի բանտս, ի չղթայս եւ ի քիւրէկս արկանէր եւ արկանել տար անիրաւութեամբ եւ թարց դատաստանաց եւ խցեալ զականջս իւր ոչ լսելով երբէք աղաչանաց նոցա։

(Շարունակելի)

---

[1] Բուէ նետել կամ գիւթութիւն ընել, Հմայել։
[2] Եէտի-Գուլէ։

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԷԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Դեկտեմբեր 21 † Կիր. սկ. Դ. or պանոց Ծննդեան
22 Բշ. բմ. Ե. » » »
23 Գշ. բկ. Զ. » » » Եւ Դաւթի մարգարէին եւ Յակոբայ առաքելոյն:
24 Դշ. գմ. Է. or պանոց Ծննդեան, Ճրագալոյց Ծնդ. Քրիստոսի:
25 † Եշ. գկ. Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
26 Ուրբ. դմ. Ս. Ստեփանոսի Եպատկոսին:
27 Շբ. դկ. Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի:

Ս. ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

(Շար.)

Թէոփիլեանք յաջողեցան իրենց կողմը դարձնել մի քանի ժառանգաւորներ, մանաւանդ յանցաւորներէն, և ամբաստանութեան մի քանի բաներ ալ գտան՝ Ոսկեբերանի բարի գործերը խեղաթիւրելով, իբր թէ եկեղեցւոյ մէջ նորաձեւութիւններ կը մտցնէ, որովհետեւ խօսքով ու գրչով կը սորվեցնէ թէ հաղորդուելէ յետոյ քիչ մը բան խմելու կամ ուտելու է որպէս զի չըլլայ թէ բերանին մէջ Ս. Խորհուրդէն մասնիկներ մնան. ևն. ևն.։ Բայց ամենէն աւելի Եւդոքսիա թագուհին բարբարանքներ կը փնտռէր Ս. Հայրապետին դեմ, ըսելով թէ քարոզներուն մէջ ասէպ կիները վար կը զարնէ՝ գիս նախատել ուզելով. նոյնպէս այս օրերս իմ անձիս դէմ խստութեամբ խօսեր է։ Եւ ստուգիւ Ոսկեբերան նոյն օրերը խօսած էր, բայց ոչ թէ թագուհւոյն դէմ, այլ կանանց մէջ եղած անկարգութեանց դէմ։ Ահա յաւէտ այս վերջին կանացի պատճառով Եւդոքսիա դարձուց անարի կայսեր միտքը և կը ստիպէր զայն որ օր առաջ Ոսկեբերանը պաշտօնանկ ընէ։

Եւդոքսիա Ս. Եպիփանն ալ կանչեց և կը բռնադատէր որ ան ալ հաւանի Ոսկեբերանի անկման։ Եւ երբ Սուրբը յանձն չառաւ, Եւդոքսիա զայրագին մղեգնութեամբ ըսաւ. Եթէ Յովհաննէսը պաշտօնանկ չընէք, կառաւնները բանալ կու տամ։ Ան ատեն Ս. Եպիփան ատենէն ելաւ ըսելով. Ես Աստուծոյ առջեւ անպարտ եմ, և փութաց նաւ մտնել և Կիպրոս իր աթոռը երթալ։ Այս տեղ Սոկրատ և Սոզոմենոս միտքան կը պատմեն թէ Եպիփան և Ոսկեբերան իրենց գլխուն գալիքները իրարու մարգարէացան սա կերպով. Թագուհւոյն հրամանաւ Ոսկեբերանի իմացուցին թէ Եպիփան քաւ անկմանով և աքսորքիդ թուղթը ստորագրեց։ Ս. Հայրապետը այս բանիս վրայ տրտմելով Եպիփանին սապէս գրեց. «Ո՛վ սքանչելի Եպիփան, որ իմ անկմանս հաւանեցար, դուն Աթոռդ պիտի չհանիս. մանաւանդ որ առաքելական սահմանադրութեանց և կանոններուն հակառակ գործեցիր՝ վիճակիս մէջ ձեռնադրութիւններ ընելով. և առանց քննութեան և հարցափորձի իմ բանադրածներս դուն արձակեցիր»։

Եպիփան ալ Ոսկեբերանի սապէս գրեց. «Ո՛վ երիցս երանելի ճգնաւոր Քրիստոսի, պիտի յաղթես և պիտի յաղթուիս. և ինչպէս որ ես քու խօսքիդ համեմատ Աթոռս պիտի չհանիմ, նոյնպէս դուն ալ աքսորավայրդ պիտի չհանիս»։ Եւ երբ Եպիփան դէպի Կիպրոս նաւով մեկնեցաւ՝ ճամբան վախճանեցաւ. նոյնպէս երանելի Յովհաննէս երկրորդ անգամ աքսորուելուն՝ վախճանեցաւ աքսորավայրը չհասած։

Սրդ երբ Թէոփիլոս հասկցաւ թէ թագուհւոյն կամքն ալ է Ոսկեբերանը աթոռէն ձգել, մտածեց այս բանս գլուխ հանել օրինաւոր ժողովով և միանգամայն արքունի պալատէն և քաղաքէն դուրս. որովհետեւ ժողովուրդէն կը վախնար։ Ուստի դարձեալ Գաղկեդոն գնաց և հոն Կաղնիք կամ Հռուփինոսի արուարձան կոչուած տեղը երեսուն, քառասուն եպիսկոպոսով ժողով գումարեց, ուր նախ Սկիսի մեռակեցներու հետ ուռնեցած խնդիրները վերջացուց. զանոնք սիրով ընդունեցաւ, որպէս զի չըլլայ թէ իր գործին արգելք ըլլան. և այնուհետեւ առաջուց ուրուածին համաձայն մէջտեղ հանուեցան Ոսկեբերանի դէմ եղած ամբաստանութիւնները, կէս մը չնչին և անոտի, կէս մը ալ ծանր ստապատիր։

Այս ժողովակը կանչեց ապա Կ. Պոլսոյ ժառանգաւորները և ստիպեց պաշտօնազրկութեան սպառնալիքով՝ որ հաւանին Ոսկեբերանի անկման։ Թէոփիլեանց հետ միաբանեցան մի քանի քահանաներ. որոնց մէջ երեւելի էին Արսակիոս աւագերէցը (որ Ոսկեբերանի յաջորդ եղաւ), Ատտիկոս, Եպիփանիոս և Ակակիոս։

Նոյն միջոցին Կ. Պոլիս ալ Ոսկեբերանի կողմակից ուրիշ քառասուն եպիսկոպոսներ հաւաքուած էին որոնցմէ մին էր Պողատիոս, որ այս բաներս կը պատմէ։ Երբ, կ'ըսէ ան պատմիչը, հայրապետանոցը նստած էինք, երանելին Յովհան Աստուծոյ հոգւովը լցուած մեզի ըսաւ. Եղբայրնե՛ր, ինձի համար աղօթք ըրէք, և եթէ Քրիստոսը կը սիրէք, իմ պատճառաւս եկեղեցիները մի՛ լքանէք. որովհետեւ ինչպէս Պողոս կ'ըսէ, իմ ժամանակս լրացեր է, և կարծեմ թէ ստուգապէս կեանքս պիտի թողում, որովհետեւ հասկցայ գաւառաճանութիւնը բանտարկութիւնս՝ որ չկրցաւ հանդուրժել իրեն դէմ ուղղած խօսքերուս ծանրութեան։ Իսկ եպիսկոպոսները արցունք կը թափէին և կը համբուրէին անոր սուրբ գլուխը և հնորհալի սակի բերանը. և գիտնալով թագուհւոյն բռնութիւնը, ոմանք կ'ուզէին հեռանալ, ոմանք ալ

Սուրբը ոչնչապատած տրտում տխուր կը կենային. Ոսկեբերան անմոց բաւ. Նստեցէ՛ք կ'աղաչեմ. լալէն դադրեցէ՛ք և ալեաս սիրաս մի՛ ճմլէք. որովհետեւ իմ կեանքս Քրիստոսն է մեռնիլը ինծի շահ է։ Ցիշեցէք ինչ որ միշտ ձեզի կ'ըսէի. Կեանքը ճամբայ մըն է. անոր թէ՛ ուրախալի և թէ տրտմալի բաներեր միօրինակ կ'անցնին։

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ" ԳՐՔԷՆ

Դիր Ա.—Գլ. Ժէ. — Մշակութական կեանքի վրայ։

Պէտք է որ սովիս շատ բաներու մէջ ինքզինքդ խարտակել, երբ կ'ուզես ուրիշներու հետ խաղաղութիւնն ու համաձայնութիւնը պահել.

Քիչ բան չէ վանքերու կամ Միաբանութեան մէջ բնակիլ, եւ հոն առանց գանգատելու կենցաղավարիլ, եւ մինչեւ ցմահ հաւատարմութեամբ յարատեւել:

Երանի՛ անոր որ հոն բարի կեանք վարած ու երջանկաբար վախճանած է:

Եթէ կ'ուզես ըսս օրինի կենալ ու յառաջադիմել, ինքզինքդ համարէ՛ իբրեւ ամբոխեալ պանդուխտ մը երկրիս վրայ:

Պէտք է որ յիմար ըլլաս Քրիստոսի համար, եթէ կ'ուզես կրօնաւորական կեանք վարել:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Փրկչին Ս. Ծննունդը

(Ղուկ. Բ. 1—7)

(Շար.)

16. «Որ նշանուած էր անոր»։ Բայց Մատթէոսի Ս. Գլխոյն մէջ գրուած մեկնութիւններէ բացայայտ գիտենք որ Մարիամ Կոյս օրինաւորապէս ամուսնացած էր Ս. Յովսէփայ հետը։ Սակայն Աւետարանիչը գերագոյն նախանձախնդրութեամբ ցոյց տալու համար անոր անբիծ կուսութիւնը և անոր յղութեան մէջ բնաւ մարդուս ման ունեցած չըլլալը, կը շեշտէ այդ «նշանուած» բառը, և անով չնաշխարհիկ փափկութեամբ Մարիամու այժմեան վիճակը կը նկատէ։ Ահա ասոր համար հիանալիօրէն շարուած են կարծես իրարու հակասող գաղափարներ. Յովսէփ, այր արդար և երկիւղած, որ ահաւոր սրտի կեղեքումներ կրած ու պայքարներ մղած և ի հրեշտակէն լուսաւորուած էր գերբնաբար, իր հետ կը տանի Կոյսն՝ որ յղի է և իրեն խոստացեալը, բայց իրեն օրինաւոր կինը։ Օրհնեալ և երջանիկ Զոյգ, որ մերձ ընդ մերձ պիտի չոչափեն ըզ-Բանն Աստուծոյ։

17. «Ու եղաւ»։ Ահա դարձեալ կրկնուն ոճոյ մը՝ որ կը ցուցնէ թէ սովորական պարագայ մը կարծուած դէպք մը, աստուածային և յաւիտենական Նախասահմանութեան վճռական որոշումով միայն յառաջ եկած է. Յովսէփ ու Մարիամ իբր խոնարհ քաղաքացիներ կը հպատակին Աւգոստոսի հրամանին, և մարդոց ազատ գործողութիւնները Աստուած կը ծառայեցնէ իր մեծ ծրագիրներուն։ Աւգոստոս Կայսր, անպիտակ գաղտնեաց Խորհրդոյն, կը ծառայէր երկնքի Թագաւորութեան շահերուն։ Հրովարտակի մը տակը դրած իր մէկ ստորագրութիւնը, մարգարէական հին պատգամի մը իրականանալուն կը ստորէր։

18. Խնդիր կրնայ ըլլալ թէ՝ Ս. Կոյսն՝ ա՛յսչափ մօտ ի ծնանել, ի՞նչպէս կրցաւ չորս կամ հինգ օրուան տաժանելի ճամբորդութիւն մը կատարել։

Մանաւանդ որ մի քանի նշանաւոր հեղինակներ կ'ըսեն թէ աս երկար ճամբորդութիւնը Մարիամ քալելով կատարեց, որովհետեւ աղքատ ըլլալով հեծանելիք մը չունէին։ Սակայն այս կարծիքը ապացոյցի մը չի յենուր. մինչդեռ հակառակ կարծիքը որ կ'ըսէ թէ Ս. Կոյսը իշուկի մը վրայ հեծած ճամբորդեց, շատ մեծ հաւանականութիւն ունի, քանի որ եղան Ս. Հայրեր իսկ որոնց կողմանէ ալ ասիկա հաստատուած է։ Այսու հանդերձ գլխաւոր պատճառը որուն համար Ս. Կոյսը կրցաւ դիւրութեամբ ճամբորդել, իր Աստուածամայրութիւնն է. յղութիւնը՝ բնաւ ծանր ու տաղտկալի չեղաւ իրեն, ինչպէս առհասարակ սովոր է ըլլալ կանանց. այսպէս կ'ուսուցանեն Ս. Հարք. քանզի Նա լի էր շնորհօք. ի Հոգւոյն Սրբոյ յղացաւ առանց մարդու գործակցութեան, և ծնաւ

առանց ցաւի. ուստի այսպիսի զաւակ մը երբէք չէր կրնար ծանր ըլլալ անոր, հետեւարար կրցաւ դիւրութեամբ գալ մինչեւ Բեթղեհէմ. և Յիսուս որ վճռած էր հոս ծնանիլ, յաներեւոյթս կ'օգնէր իրեն որպէս զի կրթայ «Վազելով լեռներու վրայ, խայտալով բլուրներու վրայ (Երգ. Բ. 8), եւ Մարիամ, որ չէր անդիտանար իր ծննդաբերութեան օրն ու ժամը, յօժարակամ ու խընդագին դիմեց, տեսնելով երջանիկ վայրկեանը մօտեցած։ Եւ ահա երբ հասան հոն, ըստ հասարակաց կարծեաց, այն դիշերն իսկ՝ անոր ծնանելու օրերը լրացան։ «Երբ ժամանակին լրումը եկաւ, Աստուած ղրկեց իր Որդին, որ ծնաւ կնոջմէն, ու մտաւ օրէնքի տակ» (Գաղ. Դ. 4)։

19. «Ու ծնաւ իր անդրանիկ որդին»։ Արդէն տեսնուեցաւ Մատթէոսի մէջ (Գլ. Ա. 25) թէ անդրանիկ բառը հոս այն իմաստով գրուած է որպէսզի նշանակէ թէ Մարիամ անաղարտ կոյս էր և Յիսուսէն առաջ ոչ մէկ զաւակ ծնած չէր. քանզի Հոգւոյն Սրբոյ Հաբս և Աստուածամայր ըլլալէն վերջը, այսինքն՝ զՅիսուս Քրիստոս ծնանելէն յետոյ, այլեւս բնաւ ուրիշ զաւակ չունեցած ըլլալը յայտնի, ամենապարզ և ամենաարամաբանական բան էր. ուստի անդրանիկ նոյնիմաստ է միածին բառին հետ, որ է՝ մէկ հատիկ զաւակ, ինչպէս ծնեալ ի Հօրէն ի յաւիտենից՝ Աստուած յԱստուծոյ և Լոյս ի Լուսոյ, նոյնպէս ծնեալ ի Մարեմայ Կուսէն ի ժամանակի՝ Քրիստոս Փրկիչ աշխարհաց։

20. «Ու պատեց խանձարուներու մէջ», ինչպէս սովոր են ընել առհասարակ նորածին մանկանց, զի մի՛ գուցէ կակուղ ու փափկակազմ անդամները հոսին։ Այս նախազգուշութիւնը բնաւ պէտք չունէր թէեւ Քրիստոսի համար որ սքանչելեօք մարդացաւ, սակայն և այնպէս իւր մայրն ի գործ դրաւ այս մարդկային սովորոյթն ալ. որպէս զի յամենայնի նմանի ուրիշ մայրերու, և Քրիստոս թոյլ տուաւ՝ որպէս զի չտարակուսուի իր մարդկային բնութեան ճշմարտութեանը վրայ։

Այդ խանձարուրքը թէեւ մաքուր՝ բայց խիստ ու կարծր լաթեր էին որոնց մէջ փաթթուեցաւ դեռածին Աբքայն Երկնից, և զորոնց Մարիամ Կոյս իր աղքատ վիճակին ներածին չափ նախապէս խնամով պատրաստած և հետը բերած էր, ինչպէս կ'ըսեն Ս. Հարք Եկեղեցւոյ։

21. Պէտք է մանաւանդ ուշադրութիւն դարձնել այս գլխաւոր պարագային թէ Աստուածամայրը թէեւ ճշմարտապէս մայր եղաւ ինչպէս բոլոր բնական մայրերն, սակայն և այնպէս պարագաներու մէջ ահագին և անհամեմատ տարբերութիւններ կան, որոնք սակայն բնաւ չեն վնասեր Անոր մայրութեան ճշմարտութեանը։

Եւ նախ՝ Մարիամ, ինչպէս որ յղութենէն բնաւ չի զգաց նեղութիւն կամ ծանրութիւն մը, այսպէս ալ զՈրդին ծնաւ առանց ցաւոց, առանց երկունքի, ինչպէս Եւայի աղջկունք դատապարտուած են կրելու (Հմմ. Ծն. Գ. 16). և այս ալ ամենապատշաճ էր, քանի որ իր ծնածն Աստուած էր։

Երկրորդ՝ Մարիամ ծնաւ առանց իր մարմնոյն ամենափոքր իսկ վնաս մը գալու. այս ինքն՝ առանց իր կուսութիւնը աւրելու, այնպէս որ ինչպէս Կոյս մնալով յղացած էր, այսպէս ալ Կոյս մնալով ծնաւ, ինչպէս եւ ապա յաւիտենապէս Կոյս մնաց՝ «Սուրբ Կոյսն կուսանաց»։ Ամենայն ինչ հրաշալի եղաւ Յիսուսի ծննդեան մէջ։ Մարիամ՝

Դուռն եղաւ Քրիստոսի անցքին,
Լցուած շնորհօք ու բարեաղուն.
Անցաւ Թագաւորն, ու մնաց
Դուռը փակ ինչպէս էր՝ ի յաւիտեան»։
(Ս. Ամբր.)

«Գրգեակներ՝ փոխանակ ծիրանւոյ, արքայական զարդարանաց մէջ փոխանակ բեհեզի ցնցոտիներ կը փաթաթուին։ Մարիամ ծնանող է եւ մանկաբարձ, եւ սիրեցեալ զաւակին ջերմեռանդն խնամատար. կը շոյէ, կը գրկէ, համբոյրներ կը դրոշմէ, կաթ կը ջամբէ. այս ամենը կ'ընէ՝ ուրախ եւ զբաղարթ. ո՛չ մի ցաւ, ո՛չ մի անարգութիւն բընութեան՝ իր ծննդաբերութեանը մէջ» (Ս. Կիպր.)։

«Բեռնաւորեալ ծոռէ նիւթնաբերաբար

փրքաւ ինկաւ հասած պտուղը. հարկ չեղաւ փրցնել պայն որ ինքնակամ կը բացուեր կու գար» (Նոյն)։

22. *Եւ ո՛ւր ծնաւ Քրիստոս, Փրկիչն աշխարհաց, Աստուածորդին, Թագաւորն թագաւորաց։—Գոմի մը մէջ, և մսուր մը եղաւ իր օրրանը։ Աւետարանիչը երկու բառով կ՚աւարտէ պայս, իր պարզութեանը մէջ սրտայոյզ։* «Դրաւ զանի մսուրի մեջ, քանզի իջեւանին մեջ անոնց համար տեղ չկար»։ *Այս իջեւանը ուրիշ բան չէր բայց Արեւելքի մէջ սովորական եղող լեռն մը ուր ամէն ճամբորդներ կ՚իջնային կ՚օթեւանէին, խեղճ տեսքով միայարկ եւ իրերու բերմամբ անմաքուր տեղ մը։ Բայց և այնպէս հոն ալ տեղ մնացած չէր, որովհետեւ Դաւիթի ցեղէն բազմաթիւ ճամբորդներ արդէն եկած էին մարդահամարի արձանագրուելու։ Բայց սրտաշարժն ան է որ եթէ Յովսէփ և Մարիամ հարուստ քլլային, այո՛ կը գտնուէր տեղ. ինչե՞ր չ՚ըներ դրամը... բայց անոնք աղքատ էին։ Ուստի տեղ չկար։ Տեղ պէտք էր սակայն ծննդաբեր Աստուածամօր մը համար։ Եւ ժամանակը գիշեր էր։ Ո՛չ մի յուզում։ Մտան անոնք այս իջեւանին... ախոռին մէջ։*

Նոյն այս վայրերու մէջ Հուրթ և Դաւիթ խեղճ կեանք անցուցած էին, նա՝ հասկեր քաղելով ապրելու համար, սա՝ խաշնարածութեամբ (Հմմ. Հուրթ, Բ. 2.—Ս. Թագ. ԺԶ. 11)։

Այս ախոռը քարայր մըն էր և մսուրը ժայռին մէջ փորուած, ինչպէս կը հաւատան Ս. Եպիփան և այլք. Բեթղեհէմի մէջ ցարդ այս տեսակ անձաւներ իբր ախոռ կը գործածուին։ Հիմա այդ քարայրը ջերմեռանդ մատուռ մըն է՝ 15 ոտք երկայն, 5 լայն և 10 բարձր. դէպի ներս աւելի կ՚ամփոփի անձկագոյն։ Ամբողջովին պատած է թանկագին մարմարներով։ Երանի՜ անոնց որ հոն՝ Աստուծոյ Որդւոյն ծննդավայրին վրայ ծունկ դրած ու խոնարհ երկրպագած են։

Հո՛ն իջեւանեցան՝ ստիպեալ, հո՛ն բնակեցան. հո՛ն ծնաւ Կոյսը. և հո՛ն մսուրի մէջ դրաւ իր Աստուածորդին։

Եւ այդ մսուրը խորհուրդ մըն էր. որովհետեւ պէտք էր որ Տէրն յայտնուէր երկու անասնոց միջեւ. «Տէ՛ր. քու յուրդ խեցի ու վախցայ. Տէ՛ր, նայեցայ քու գործերուդ ու զարհուրեցայ։ Երկու կենդանիներու մէջ պիտի ճանչցուիս, տարիներու մօտեցայուն՝ պիտի յայտնուիս. երբ իմ անձս խռովի, քու բարկութեանդ մէջ յիշե՛ ողորմութիւնները» (*Ամբ. Գ. 2*)։— «Եզը ճանչցաւ իր տէրը, եւ էշը՝ իր տիրոջ մսուրը ու Իսրայէլ զիս չճանչցաւ» (*Ես. Ա. 3*)։

Ուրեմն մարգարէներու այսչափ բազմութեան մէջ բնական է որ կային նաև անասուններ այդ ախոռին մէջ և ահա մարգարէութիւնը կատարուեցաւ։ Շատ Ս. Հայրեր կը հաստատեն որ յիրաւի մսուրին կապուած էին եզ մը ու էշ մը. այսպէս Ս. Պետր. Ոսկիբան, Ս. Հերոնիմոս, Ս. Պաւղինոս, եւն։ Եւ եզն ու էշը Քրիստոսի ծննդեան վերաբերեալ քրիստոնեայ ամենահին քանդակներու և պատկերներու վրայ կ՚երեւին անպատճառ. այսքան հին և շարունակեալ ընդհանուր աւանդութիւն մը չի կրնար անհիմն և անարժէք ըլլալ։

23. *Աւասիկ Ս. Գրիգոր Նիւսացին կ՚ըսէ.* «Անոր համար Նա որ երկնքին իջաւ, մսուրի մէջ՝ որ անասնոց կերակուրին յատուկ տեղ է, առաջի կը դրուի հաց կենաց, որպես զի նաեւ անքանգիտ (Իսրայէլ եւ հեթանոսք ընդ մեղօք,) բանական կերակուրն ուտելով բանաւոր դառնան։ Ուստի եզան եւ իշու միջեւ մարդ մէջ է՝ երկուքին ալ տերը, որպես զի ցանկին միջնորմը քակելով, երկուքն ալ իրմով նորաստեղծ նոր մարդ, եւ, մէկուն վրայէն օրէնքին ծանր լուծը վերցնէ, եւ միւսը թեթեւցնէ կուռքերուն պաշտելութեան բեռէն»։

Յիրաւի արժանաւոր օրրան Անոր՝ որ իր պատանեկութեան մէջ յառաջանալով պիտի ստիպուէր ըսելու. «Աղուէսները որջ մը ունին ու թռչունները բոյն մը, բայց մարդու Որդին չունի տեղ մը՝ իր գլուխն հանգչեցնելու համար»։ *Ինծի օրէն չունեցաւ իրեն սեպհական ստացուած մը, հանգստավայր մը, հանգչեցաւ միայն սիրելի Մօրը գիրկը եւ ա-*

նամնոց միջեւ յարդերու վրայ, եւ ապա Խաչին վրայ եւ Գերեզմանի մէջ։ Օրհնա՛լ ըլլայ յաւիտեանս յաւիտենից, Յիսուս-Մանուկ, Աստուած կենդանի, Տէր տէրանց եւ Թագաւոր թագաւորաց։

24. Ահա այսքան հակիրճ խօսքերով է որ Աւետարանիչը կ'աւարտէ երկնքի ու երկրի Տիրոջ, ծննդեան պատմութիւնը, վսեմ՝ իր պարզութեան մէջ, սքանչացնող՝ իր վճռատու հաւատքով, Պատգամ է Աստուծոյ որ ամենէն հպարտ գլուխն ալ, ամենէն յամառ ծունկն ալ կը կքէ կը խոնարհցնէ. որ կը յուզէ ամէնէն անտարբեր հոգին, ամենէն խստերախ կամքը, կը տրոփեցնէ ամէնէն քարացած սիրտը եւ յարտասուս կը ցնդեցնէ ամենէն ցամաք ու այրող աչքերն ալ։ Զէ վէպ, այլ ինքնին կը ցայտի Ճշմարտութիւնն որ կը խօսի հոն, որ կու տայ Բարի-Լուրը։

Տէ՛ր Յիսուս, Մանո՛ւկ սիրեցեալ ու պաշտեցեալ, հաց եւ երջանկութիւն հրեշտակաց և սրբո՛ց, եկ՛ւ հանգչէ՛ ի Սրտո՛ւ։ խեղճ մսուրին մէջ, որ կրքերու յարդերովը լի է. այրէ՛ զանոնք սիրովդ եւ տոչորէ՛ պիս, ու եղի՛ր ինծի լոյս, առաջնորդ, եղի՛ր վեսայ իմ պանդուխտ հոգւոյս.

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ»։

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

(Շարունակելի)

ԵՍԹԵՐ(*)

(Շար.)

Ռ. ԱՐԱՐ. Զ. ՑԵՍԱՐԱՆ

Արտաշես

Այս վարձքն անշուշտ անլուր է։
Հպատակ մ'այսպիսի պատիւ բնաւ չէ վայելած։
Սակայն վարձատրութիւնն որչափ է մեծ և չքնաղ
Եւ քանիսն այդ հրէին ազգն է նուաստ և անարգ
Կեանքըս ա՛ինքան աւելի կ'ապահովեմ ցոյց տալով
Թէ ապերախտ ըլլալէն ո՛րքան կը խորշի Արտաշէս։
Անմեղն յանցաւորէն պիտի տեսնեն որոշուած։
Սակայն նորէն պիտի ջնջեմ այդ ժողովուրդն անիծեալ,
Անոնց ոճիրն . . .

Է. ՑԵՍԱՐԱՆ

Արտաշես, Եսթեր. Էլիզ, Թամար,

Երգչախումբը

Եսթեր կը մտնէ Էլիզին կռթնած, չորս իսրայելացի օրիորդներ անոր պատմուճանը կը բռնեն

Արտաշես

Առանց իմ հրամանիս հո՞ս կու գան։
Ո՞ր լիրբ մահկանացուն հոս կը դիմէ մեռնելու։
Պահապաննե՛ր...։Եսթեր դո՞ւն ես, ինչո՞ւ առանց լուր տալու

(*) Տես թիւ 122, էջ 743

Եսթեր

Աղջիկնե՛րս, բռնեցէ՛ք ձեր խելակորոյս Թագուհին.
Մահ, կը մեռնիմ։

(Կ՚իյնայ մարած)

Արտաշես

Հզօր աստուածներ, ինչ սրտակարկ թալկացում՝
Դէ՛մքը գեղանի մէկէն ըրաւ գունաթափ։
Ինչո՞ւ կը վախնաս, եղբայրդ չե՞մ ես, Եսթեր։
Այդ խոտապոյն կարգն ու կանոն մի՛թէ քեզի՞ համար է։
Ապրէ՛, ոսկեղէն մականս որ քեզ կ՚երկարեմ
Քեզ համար գթութեանս է գրաւական հաւատոի։

Եսթեր

Ո՞ր փրկաւէտ ձայնն է որ ինձ կու տայ հրաման ապրելու
Եւ ինձի կը կոչէ նորէն հոգիս փախստեայ։

Արտաշես

Չե՞ս ամենեւին տեղեակ ձայնին ամուսնիդ.
Դարձեալ կ՚ըսեմ, Եսթեր, ապրէ, ուշ բեր, եկուր դուն քեզի։

Եսթեր

Տէ՛ր իմ, միշտ ահուդողով միայն կրցեր եմ դիտել
Ճակտիդ վրայ դրոշմուած վայելչութիւնը վսեմ։
Ալ հասկցի՛ր թէ որչափ այդ ճակատն ինձի զայրացած
Զգեց սարսափ և զարհուրանք խրոովայոյզ հոգւոյս մէջ։
Բազմած այդ շանթերով շրջապատուած գահին վրայ
Կարծեցի թէ զիս փոշի դարձընելու պատրաստ ես։
Բա՛ըէ, ո՞ր յանդուգնն սիրտն առանց ահով քննելու՝
Աչքդ ցայտած փայլակներուն առջեւ կրնար դիմանալ.
Զայրոյթն Աստուծոյ այդօրինակ կը շողայ։

Արտաշես

Արեւ՛, ով անբասաւոր, անանց լոյսին ջինջ լապտեր.
Ես ինքնին կը խոովի՛մ, առանց դողի, ապտնապի
Չեմ կրնար անոր յոյզերն ու տագնապները դիտել։
Մեղմէ՛, դշխոյ, հոգեկեղեք արհաւիրքներդ մեղմէ՛։
Սրտին Արտաշէսի միահեծան Տիրուհի.
Անոր բարեացակամ սէրը միայն արդ ըզգա՛.
Կէ՞ն սրբայութեանս պէ՞տք է քեզի պարգեւել։

Եսթեր

Է՛հ, թագաւոր մը՝ բովանդակ սիեզերաց ահարկու,
Որուն առջեւ փոշեհամբոյր կը խոնարհի ամէն ինչ,
Կրնա՞յ նայիլ իր ըստրուկին այսքան գթոտ ակնարկով։
Եւ տալ ինձ իր սրտին վրայ իշխանութիւն ծայրագոյն։

Արտաշես

Հաւատա՛, սիրելիդ իմ, այս պետութիւնն ու մականն,
Եւ երկիւղէ յառաջ եկած ամէն խորին յարգանքներ,
Իրենց պերճ շքեղութեան քիչ քաղցրութիւն կը խառնեն,
Եւ յաճախ իրենց թշուառ տիրոջ կ'առթեն տաղտապանք:
Ձեմ գիտեր ի՛նչ գեղ ու շընորհ քու վրադ միայն կը գտնեմ.
Որով միշտ կ'ուրախանամ և երբէք չեմ պարտասեր։
Ցանկալի լռութեան հեշտ եւ հրզօր հրապոյրներ
Եսթերին ամէն բանն անմեղութիւն կը բուրէ,
Ինքն ամենէն սեւ ստուերներն սպառսպուռ կը ցրուէ։
Պայծառութիւն կը պարգեւէ ամենամութ օրերուս։
Ի՞նչ կ'ըսեմ, արքունի գահին վրայ քովդ նստած,
Ոսոխ աստղերուն զայրոյթէն չատ չեմ վախնար.
Կը հաւատամ որ արքունի թագիս՝ ճակատդ կու տայ
Փայլ ու շուք որ արպոյ կ'ընծայեն զայն դից անգամ։
Արդ սի՛րտ առ, պատասխանէ՛, ինծմէ բընաւ մի ծածկեր,
Ի՞նչ կարեւոր գործի համար յանձն առեր ես գալ այս տեղ,
Ի՞նչ շահ, ի՞նչ անձկութիւն ըզքեզ ուժգին կը յուզեն։
Կը տեսնեմ թէ կը նայիս երկինք երբ ինձ կ'ունկնդրես։
Խօսէ՛, բաղձանքներուդ իրագործումն ստոյգ է,
Թէ որ այն կախում ունի մահկանացուի մը կամքէն։

Եսթեր

Ո՛վ բարութիւն, որ զիս յուսով մեծարանքով կը լնու
Կարեւոր շահ մը կը ստիպէ զիս, Տէ՛ր, քեզի դիմելու.
Երջանկութեանս և կամ յետինթշուառութեանս կը սպասեմ
Եւ, Տէ՛ր իմ, ամէն բան կախում ունի քու կամքէդ.
Բերնէդ ելած բառ մը միայն իմ վշտերուս վերջ տալով
Կրնայ Եսթերն ընել ամէն դշխոներէն երջանիկ։

Արտաշես

Ա՜հ, հետաքրքրին միտքս ո՛րքան կը յուզես։

Եսթեր

Եթէ երբէք աչքիդ առջև շնորհ գտած եմ, Տէր իմ,
Եթէ երբէք իմ իղձերուս իրագործում կ'ուզես տալ,
Թող որ ամէն բանէ առաջ, այսօր Եսթեր կարենայ
Իր սեղանն ընդունիլ իր ինքնակալը հրզօր,
Եւ Համանն ըլլայ կրցորդ այս գերազանց պատիւին.
Անոր առջև պիտի կրնամ վերջ տալ այս խոր լռութեան.
Կարօտ եմ իր ներկայութեան որ միտքս յայտնել կարենամ։

Արտաշես

Եսթե՛ր, զիս որպիսի՛ վարանումի կը մատնես։
Եւ սակայն ըլլայ թո՛ղ ինչպէս որ դուն կը բաղձաս։

(Իր հեսեւորդներուն)

Համանը գըտէք դուք, փութով իրեն զեկուցէ՛ք
Թէ դշխոյին քովն է կոչուած անհրաժեշտ հարկ է որ գայ։

Ը. ՏԵՍԱՐԱՆ

Արտաշես, Նսքեր, Էլիզ, Թամար, Հիդասպ

Երգչախումբը

Հիդասպ

Քաղդէացի գիտուններն ըստ հրամանիդ կանչուած
Այս յարկին մէջ միահամուռ հաւաքուած են Տէր Արքայ։

Արտաշես

Տիկի՛ն, տարօրինակ երազ մը զիս կը խռովէ.
Քու շահդ անգամանոց տալիք պատասխանէն կախուած է.
Վարպետի մը նուէրն եկուր լսէ՛ խօսքերնին,
Որ կարենաս մտքիդ լոյսով ըլլալ ինծի ձեռնտու.
Քեզի համար, ինծի համար ժանտ ոսոխէ կը վախնամ։

Նսքեր

Ինծի հետ եկո՛ւր, Թամա՛ր։ Դուք, վեհերոտ աղջիկներ,
Հոս հեթանոս դրանիկներուն ակնարկներէն աներկիւղ,
Այս գահին հովանւոյն տակ սպասեցէ՛ք իմ դարձիս։

(Շարունակելի)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Ս. Քահանայապետը մանաւոր ունկնդրութեան ընդունեցաւ Տէլլա Դորէ կոմսը, և միւս գահերէց անդամները Ընկերական Եօթնեակին որ վերջին օրերս տեղի ունեցաւ Միլանի մէջ և ուր խօսուեցաւ Ս. Քահանայապետին անկախութեան ներկայ պայմաններուն վրայ։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Քիչ մը ողջմտութիւն ունեցողը չի կրնար ուրանալ թէ ժողովրդապետին իրաւունքն է իր արամադրութեան տակ ունենալ եկեղեցւոյ զգեստներուն եւ սպասներուն պահարաններուն բանալիները՝ իր նուիրական պաշտօնին պարագաները պատշաճօրէն կատարել կարենալու համար։ Սամաթիոյ թաղական էֆէնտիները իրենց նոր Տուարի դէմ ունեցած հակառակութենէն մղուած ուզեցին չճանչնալ այս անվիճելի իրաւունքը, և բաւական ատենէ ի վեր նոյն բանալիները քովերնին կը պահէին, հակառակ նոյն տեղւոյն եռանդուն ժողովրդապետ Անտոն Վ. Մերճիմէկեանի պահանջներուն։ Վերջերս ի Նարատ Յուսութեան տօնին առթիւ նորին Գերապատուութիւնը կրկնեց իր պահանջը և երբ մերժուեցաւ, ասս անգամ հարկ տեսաւ դիմել կառավարութեան։ Ուրախութեամբ կը լսենք թէ իր դիմումը յաջողութեամբ պսակուեր է և բոլոր բանալիները իրեն յանձնուած են։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Երբեակ Զինակցութեան տէրութիւնները որոշեր են, գերման զինուորական մարմնոյն խնդրին մէջ եզածին պէս, կղզիներու խնդրին մէջ ալ Բ. Դրան տեսակէտը ու այդ կերպով օսմ. իրաւունքները պաշտպանել։ Երբեակ Համաձայնութեան ներքեւեն ոմանց դէմ։ Լոնտոնի կառավարութիւնը, այդ խնդրոյն մէջ չի զինակիցներուն ընթացքին հետեւելու մասին թոյլ կը շարժի. օսմ. կառավարութիւնը անշուշտ տեղեակ է այս ճշմարտութեան։

*** Վերջերս Կրէտէի մէջ հանդիսաւոր կերպով պարզուեցաւ հելլէն դրօշը։ Թանին այս առթիւ կը հրաւիրէ Կրէտէի իսլամները որ իրրեւ հայրենասիրական պարտականութիւն, գաղթեն, կուրծք տալով ա-

մէն տեսակ տառապանքներու. քանի որ Կրէտէի մէջ պիտի ենթարկուին հելլէն վարչութեան անտանելի կեղեքումներուն։

*** Եպարքոսը, Դեկտ. 15ին, դեսպանները ընդունած միջոցին բերանացի հաղորդեց Բ. Դրան պատասխանը այն դիմումին համար, որ Զօր. Լիմանի անուանման մասին երեն եղած էր երկու օր առաջ։ Սայիտ Հալիմ փաշա ըսաւ ըսաւ թէ՝ գերման զինուորական մարմինն իբրեւ զինուորական մարզիչ միայն պիտի պաշտօնավարէ, նաև Կ. Պոլսոյ մէջ տիպար զօրաքանակ մը պիտի հաստատէ։ Դարդանէլի ու Վոսփորի նեղուցներուն հրամանատարութիւնն ու վերակազմութիւնը անոր պաշտօնէն դուրս են, ինչպէս նաև քաղաքական որ եւ է խնդիր. Եպարքոսը յարեց թէ այս մասին վերջոյ մը պիտի հրատարակուի։

*** Օգոստոսդ Վէտրին թռիչք մը կատարեց մայրաքաղաքիս վրայ։ Դէպ ի Տօլմա Պաղչէ պալատը գնաց, տասնըհինգ մեգրի չափ վար իջաւ և եբրատագիտական նամակ մը նետեց վար։ Յետոյ մինչեւ Թարապիա գնաց. քիչ ետքը Ոսկեղջիւր դարձաւ և օսմ. դրօշներ նետեց օսմ. մարտանաւերուն վրայ։

*** Կ. Պոլսէն կը գրեն Թայմզի.—Կ'երեւայ որ Եւրոպայի մէջ պէտք եղածին պէս չէ հասկցուած թէ ինչ ընդհանուր հիմերու վրայ հաստատուած է օսմ. կառավարութեան ընթացքը՝ հայաբնակ նահանգներու բարենորոգմանց մասին ռուսական ծրագրին հանդէպ։ Նախ սա ըսեմ թէ օսմ, Նախարարաց Խորհուրդը տակաւին որոշում մը չէ տուած ռուսական ծրագիրը մերժելու մասին։ Նոյն իսկ կը կարծուի թէ այդ խնդրին համար համաձայնութիւն չ'այ Դահլիճին անդամներուն միջեւ։ Երկրորդ, ռուսական ծրագրին մէջ արամադրութիւն մը չկայ թէ երբ Թուրքիոյ առաջարկուած օտար խորհրդականներու և օսմ. քննիչներու միջեւ անհամաձայնութիւն ծագի, խնդիրը պիտի ներկայացուի վեց տէրութեանց դեսպաններուն դատաստանը։ Մեծ տէրութիւնները օսմ. կառավարութեան փառքն ու պատուաբեր պահպանելու համար, բարենորոգմանց խնդրին մէջ շատ մեծ զիջողութիւններ բրին։ Այսուհանդերձ խիստ դժուար է ըսել թէ Բ. Դուռը բարենորոգմանց խնդրին մէջ ասկէ ետքը ի՛նչ ընթացքի պիտի հետեւի Եւրոպայի հանդէպ. վասն զի եւրոպական հակակշիռն դէմ եղած հոսանքը վերլերս աւելի սաստկացած է։ Բայց հաւանական է որ այդ մասին ցոյց տրուած ընդդիմութիւնը քիչ օրէն դադրի։

*** Կ'ըսուի թէ Եգէականի կղզիներուն մասին Անգլիոյ ծանուցագիրը կը պարունակէ հետեւեալ կէտերը.— Վերջապէս Յունաստանի ձգել անոր գրաւած կղզիները, բացի Խիզրոսէն և Թենեդոսէն, որ Թուրքիոյ կը մնան։ Բ. Մանաւոր երաշխաւորութիւններով պիտի արգիլուի որ Յոյները կարենան գործածել այդ կղզիները՝ դէպ ի Փոքր Ասիա մաքսախուսութիւն կատարելու համար։ Գ. Այն կղզիները չպիտի ամրացուին։ Դ. Խալիոյ գրաւած կղզիները պիտի դարձուին Թուրքիոյ և ինքնօրինութիւն պիտի վայելեն։ Տերութիւնները իրենց կը վերապահեն այս կղզիներուն մասին կարգադրութիւն մը ընել անմիջապէս որ գործադրուին Լօզանի դաշնագրին տրամադրութիւնները։ Կը հաւաստուի թէ անգլ. առաջարկը կը փարձէ Յունաստանի գրաւած կղզիները վերջնապէս անոր ձգելու խնդիրը կապել Ալպանիոյ ձգուած հողերուն Յունաց կողմէ պարպուելուն խնդրոյն հետ։ Ալպանական այս հողերէն զօրքը քաշելու մասին Յունաստանի տրուած պայմանաժամը մէկ ամիս պիտի երկարաձգուի, սկսելով այն օրէն որ պաշտօնապէս հելլէն կառավարութեան պիտի հաղորդուի Ալպանիոյ հարաւային սահմանը։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Յառաջիկայ 1914 տարուան սկիզբը Շաբաթաթերթս կը թեւակոխէ իր չորրորդ տարեշրջանին։

Այս առթիւ կը յիշեցնենք մեր պատուական ընթերցողներուն, որ հաճին, որչափ կարելի է շուտ, վերանորոգել իրենց բաժանորդութիւնը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	801
Զավայր էհպի	803
Երանելի Տէր Կոմիտաս Նահատակին պատմական երկու գրութիւնները	805
Եօթնեակ Քրիստոնէի	808
Մեկնութիւն Ս. Աւետարանի	809
Եսբեր	812
Տեղեկագրական	815

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ՔԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արծագնանց Շաբաթաթերթի, Բերա. Պայրամ փողոց թիւ 6. Ֆ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով։

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արդիւնքները։

Գին 5 դահեկան, էջ 144 ամուր թղթակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գնողներու, գոհացուցիչ զեղչ։

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարրական Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ։ Բաղկացած է 136 էջերէ։ Գին, ամուր թղթակազմը 2 դ.կն.։

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Société Anonyme au Capital entièrement versé de K. 130.000.000

Réserve: K. 37.300.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Herrengasse 8.

avec 12 Agences dans les principaux quartiers de la ville.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE: Place de Karakeuy, Galata

BUREAU DE STAMBOUL; Elkiatib Han

BUREAU DE PÉRA: St. Antoine Han

Succursales et Agences à:

Aussig a/E	*Carlsbad*	*Marienbad*	*Teplitz*
Bielitz-Biala	*Friedek-Mistek*	*Pilsen*	*Tetschen*
Brünn	*Graz*	*Prag*	*Villach*
Budapest	*Klagenfur*	*Prossnitz*	*Wr. Neustadl*
Czernowitz	*Lemberg*	*St. Poelten*	

La Succursale de Galata, l'Agence de Stamboul et celle de Péra s'occupent de toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets.

Emission de traites, chèques, lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Ouverture de Comptes-Courants, d'accréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse, garde de valeurs publiques etc. etc.

La Succursale du **Wiener Bank-Verein** à Galata et ses Agences à Stamboul et Péra ont institué pour faciliter à la petite épargne le placement de ses économies un service de Caisse d'Epargne aux clauses principales suivantes:

Les versements doivent être effectués en Piastres or; il n'est point accepté de versement inférieur à Pst. 50.—

Le Wiener Bank-Verein servira au déposant un intérêt fixé aujourd'hui à $3^1/_2$ % p. a. pour toute somme jusqu'à concurrence de Ltq. 1000— et 3 % seulement pour l'excédent dépassant ce chiffre.